



*«Նոր ժամանակի  
կրթություն» ՀԿ*

*ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ*

*ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔ*

*Հետազոտության թեման՝ «Սասունցի Դավիթ» էպոսի  
կերպարները*

*Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն*

*Հետազոտող ուսուցիչ՝ Տաթևիկ Համբարձումյան*

*Ուսումնական հաստատություն՝ Արևշատի միջն. դպրոց*

## *Երևան 2022*

### <<Սասունցի Դավիթ>> էպոսի դերը

Էպոսը ժողովրդի կողմից ստեղծված բանավոր մեծածավալ ստեղծագործություն է, որտեղ աչտահայտվում են տվյալ ժողովրդի ձգտումները, երազանքները: Էպոսը առաջին անգամ գրի է առել Գարեգին Սրվանձտյանը, որը 1874 թվականին տպագրվել է «Սասունցի Դավիթ» կամ «Մհերի դուռ» վերնագրով: Երկրորդ պատումը գրի է առել Մանուկ Աբեղյանը 1878թ: Էպոսում պատկերվում է 8-10դդ հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարը արաբական տիրապետության դեմ: Էպոսը բաղկացած է 4 ճյուղից՝ «Սանասար և Բաղդասար», «Մեծ Մհեր», «Սասունցի Դավիթ», «Փոքր Մհեր»: Հերոսները իրար հետ կապված են արյունակցական կապով՝ պապ, որդի, թոռ են: Հայ գրողներից էպոսը մշակել են՝ Հովհաննես Թումանյանը, Ավեիք Իսահակյանը, Եղիշե Չարենցը, Նայիրի Զարյանը և այլք: 1939 թվականին էպոսի հազարամյակի կապակցությամբ 60 պատումներից կազմվեց այսօրա համահավաք բնագիրը: 1964թ. աշխարհի էպոսների միջազգային մրցություն «Սասնա Ծոեր» վիպերգը գրավեց առաջին տեղը:

### **Հարցեր.**

1. Ինչպե՛ս է ներգործում էպոսը սովորողի արժեհամակարգի ձևավորման վրա:
2. Կերպարների վերլուծությունը արդյոք ազդո՞ւմ է սովորողի վրա:
3. Ովքե՛ր են էպոսի սիրելի հերոսները

**Հայոց էպոսի գլխավոր հերոս Սասնա Դավիթը՝ ըստ Հակոբ Կոջոյանի**

**«Սասնա ծռեր»** կամ **«Սասունցի Դավիթ»**, հայ ժողովրդի ազգային էպոս կամ դյուցազնավեպ, որը ստեղծվել է ժողովրդական բանահյուսության հիման վրա: Վիպասացների և բանահավաքների կողմից այն կոչվել է նաև **«Սասնա փահլևաններ»**, **«Սասնա տուն»**, **«Ջոջանց տուն»**, **«Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ»**, **«Դավիթ և Մհեր»**, **«Դավթի պատմություն»**, **«Դավթի հեքիաթ»** և այլն: Էպոսի գաղափարական ոգին հայ ժողովրդի հերոսական մաքառումն է թշնամիների դեմ հանուն ժողովրդի ազատության և անկախության, հայրենիքի և պետականության պահպանման: Հայոց դյուցազնավեպը գաղափարական առումով արտացոլում է նաև իրականությունից ունեցած դժգոհությունն ու կառուցվելիք արդար աշխարհի նկատմամբ ունեցած փափագը՝ բոլոր դեպքերում գովաբանելով օտարի լծի դեմ ելած ժողովրդի հերոսական պայքարը:

**«Սասնա ծռեր»** կամ **«Սասունցի Դավիթ»**, հայ ժողովրդի ազգային էպոս կամ դյուցազնավեպ, որը ստեղծվել է ժողովրդական բանահյուսության հիման վրա: Վիպասացների և բանահավաքների կողմից այն կոչվել է նաև **«Սասնա փահլևաններ»**, **«Սասնա տուն»**, **«Ջոջանց տուն»**, **«Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ»**, **«Դավիթ և Մհեր»**, **«Դավթի պատմություն»**, **«Դավթի հեքիաթ»** և այլն: Էպոսի գաղափարական ոգին հայ ժողովրդի հերոսական մաքառումն է թշնամիների դեմ՝ հանուն ժողովրդի ազատության և անկախության, հայրենիքի և պետականության պահպանման: Հայոց դյուցազնավեպը գաղափարական առումով արտացոլում է նաև իրականությունից ունեցած դժգոհությունն ու կառուցվելիք արդար աշխարհի նկատմամբ ունեցած փափագը՝ բոլոր դեպքերում գովաբանելով օտարի լծի դեմ ելած ժողովրդի հերոսական պայքարը:

Էպոսի պատումներից մեկը 1874թվականին գրի է առել Գարեգին Սրվանձտյանը՝ հրատարակելով *«Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ»* վերնագրով: 1889 թվականին էպոսի մի տարբերակ գրի է առել Մանուկ Աբեղյանը, իսկ արդեն 1939 թվականին Հովսեփ Օրբելին՝ էպոսագետների խմբի հետ մեկտեղ, ստեղծում է 60 պատումներից բաղկացած համահավաք բնագիր: Համահավաք բնագիրը թարգմանվել է ֆրանսերեն, չինարեն, անգլերեն (թարգմանիչ՝ Լևոն Չավեն Սյուրմեյան), հունարեն, ռուսերեն, գերմաներեն, վրացերեն, թուրքերեն, ադրբեջաներեն և այլ լեզուներով: «Սասնա ծռերն» ամբողջական կամ մասնակի մշակել են նաև Ավետիք Իսահակյանը, Եղիշե Չարենցը, Սողոմոն Տարոնցին, Վիգեն Խեչումյանը, Հմայակ Միրասը, Մկրտիչ Խերանյանը, Նաիրի Չարյանը և ուրիշներ: Էպոսին բազմիցս անդրադարձել են կերպարվեստում (Հակոբ Կոջոյան, Երվանդ Քոչար, Մհեր Աբեղյան, Էդուարդ Իսաբեկյան, Արտաշես Հովսեփյան և ուրիշներ), երաժշտության մեջ (Գևորգ Բուդաղյանի «Խանդութ» երաժշտական կոմպոզիցիան՝

ըստ Ալեքսանդր

Սպենդիարյանի երաժշտության, Էդգար Հովհաննիսյանի «Սասունցի Դավիթ» քալեո-օպերան և այլն), կինոարվեստում («Սասնա ծռեր», ռեժիսոր՝ Արման Մանարյան, 2010 թվական, մուլտֆիլմ), թատրոնում: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին սփյուռքահայերի հանգանականությամբ ստեղծվել է «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը, իսկ Արցախյան պատերազմի տարիներին կազմավորվել են «Սասնա ծռեր» և «Սասունցի Դավիթ» կամավորական ջոկատները: Հայաստանի անկախ Հանրապետությունում էպոսի հերոսների անուններով կոչվել են տեղանուններ, ինչպես նաև «Սասունցի Դավիթ» անունով մետրոպոլիտենի կայարան <<Սասունցի Դավիթ>>

«Սասնա ծռեր» էպոսն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկում: Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության կոնվենցիայի Միջկառավարական կոմիտեի 7-րդ նստաշրջանը 2012 թվականի դեկտեմբերի 5-ին «Սասնա ծռեր կամ Սասունցի Դավիթ էպոսի կատարողական դրսևորումները» հայտն ընդգրկել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում:

«Սասնա ծռեր» էպոսն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկում: Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության կոնվենցիայի Միջկառավարական կոմիտեի 7-րդ նստաշրջանը 2012 թվականի դեկտեմբերի 5-ին «Սասնա ծռեր կամ Սասունցի Դավիթ էպոսի կատարողական դրսևորումները» հայտն ընդգրկել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում:

# Էպոսի բովանդակություն

Էպոսի

բովանդակություն

## Արքայադուստր Օովինարի ամուսնություն

Հայոց դուստրն անվամբ և Բագրատունիների թագավորության արքա Գագիկի դստեր՝ Օովինարի և Բաղդատի անհավատ խալիֆի ամուսնությամբ: Օովինարի գեղեցկության մասին խալիֆը տեղեկացել էր իր հարկահաններից, ովքեր Հայաստան էին ժամանել տուրքերը ստանալու: Նկատելով չնաշխարհիկ արքայադստերը՝ հարկահավաքները միանգամից խալիֆին տեղեկացնում են Օովինարի գեղեցկության մասին: Խալիֆը Օովինարին մեկ անգամ տեսնելուց հետո իր ստորադասներին հրամայում է ամեն գնով Բաղդադ տանել գեղեցկուհուն: Շուտով հայոց աշխարհ են ժամանում վերջինիս պատվիրակները, ովքեր սպառնում են Օովինարին՝ խալիֆին կնության չտալու դեպքում պատերազմ մղել:

Այս հարցի շուրջ հայոց ավագանու անդամներն ունենին հակասական դիրքորոշում. անդամների մի մասը կտրականապես դեմ էր մուսուլման խալիֆի և խաչապաշտ արքայադստեր ամուսնությանը, իսկ մյուս մասը՝ ընդհակառակը, պնդում էր, որ արյունահեղությունից խուսափելու համար հարկավոր են Օովինարին տալ խալիֆին կնության: Գիտակցելով իրավիճակի լրջությունը և ցանկանալով զերծ մնալ հազարավոր ահերից՝ Օովինարն ինքնակամ որոշում է կայացնում ամուսնանալ և հորը խնդրում իրեն կնության տալ Բաղդատի խալիֆին: Գագիկը ևս հակված չէր այս

տարբերակին, բայց ստիպված էր հարգել դասեր կամահայտնությունն ու հայկական պետականության շահերը:

- — Որ ես էն կռապաշտ թագավոր չառնեմ, զամեն տի սպանի իմ պատճառով, աղեկն էն է, ես էրթամ, ուրիշ մարդու թող բան չըլնի: Ե՛ս մենակ մեռնիմ իմ հոր թերեն. ես մեկ ջան եմ, էրթամ, կորսըվիմ, քանց մեր էրկիր ավերի, էն հազար-հազար հոգիք կորուսանին: Դարձավ ասաց.— Հայրիկ, ինձ տուր էնոր:
- Ծովինարը դիմում է Գագիկ արքային, «Սանա ծոեր» էպոս

Հասնելով Բաղդադ՝ Ծովինարը պայման է դնում խալիֆի առաջ, որ նա առաջիկա մի տարին չպետք է մոտենա իրեն: Արաբաց խալիֆը համաձայնվում է այդ պայմանի հետ և արքայադստեր համար առանձին դոյակ կառուցում: Ըստ հին հայկական ավանդական սովորության՝ Համբարձման տոնի ժամանակ հայ կանայք դուրս էին գալիս դաշտ և բախտագուշակ կատակերգերով վիճակ հանում: Ծովինարն այդ օրը դուրս էր եկել զբոսանքի և երկարատև շրջածությունից հետո որոշում է դույզն-ինչ դադար առնել: Ծարավի զգացումը խեղդում էր գեղեցկուհի նորահարսին և դեպի երկինք ուղղված նրա աղերսով ժայռի միջից վճիտ աղյուր է բխում: Սառնորակ աղբյուրի ջուրն ուներ մոզական կարողություն, որի շնորհիվ էլ Ծովինարը հղիանում է իր խմած ջրից: Լսելով կնոջ հղիության լուրը՝ Բաղդադի խալիֆը հրամայում է մահապատժի ենթարկել նրան, սակայն Ծովինարը խնդրում է ժամանակ տալ իրեն, որպեսզի վախճանվի երեխաներին ունենալուց հետո: Այսպիսով, հայոց Գագիկ թագավորի դուստրը ծնում է երկու դուստրուհու, որոնցից մեկի անունը կնքվում է Բաղդասար, մյուսինը՝ Սանասար: Նրանք հասակակիցներից տարբերվում էին իրենց

իրենց օրեցօր աճի կարողությամբ և գորեղությամբ:

Սանասարն ու Բաղդասարը՝ Ծովինարի որդիները, ոչ թե օրով, այլ ժամով էին մեծանում և տակավին հինգ տարեկան չդարձած՝ ան ու սարսափի մեջ են գցում Բաղդադի ավագանու երեխաներին: Այս հողի վրա վեզիրների և խալիֆի միջև վիճաբանություն է տեղի ունենում, որի արդյունքում որոշվում է տղաներին հեռացնել Բաղդադից: Գագիկ արքայի թոռների հետագա մանկությունն անցնում է հայոց երկրում, քանի որ Բաղդադից նրանց հեռացնելուց հետո վերջիններս հանգրվանել էին իրենց պապի մոտ: Կարճ ժամանակահատվածում Բաղդասարն ու Սանասարը մեծանում են՝ վերածվելով աննկարագրելի ուժի տեր դուստրուհուների: Շուտով նրանք ուղևորվում են այն ավազանի մոտ, որտեղից կյանք են ստացել: Սանասարը կրտսեր եղբորն առաջարկում է նետվել ծովի ալիքների մեջ, սակայն Բաղդասարը հրաժարվում է: Սանասարը համարձակորեն ձգտվում է ծովի ալիքներին ընդառաջ, սակայն ջրերը հետ են քաշվում, իսկ քաջարի դուստրուհուն ընկնում է ստորեկրյա թագավորություն:

Այստեղ հրաշք է կատարվում. կյանքի աղբյուր համարվող Մարութա Բարձրիկ Սուրբ Աստվածածինը Սանասարին է հանձնում Թուր Կեծակին (կայծակնային սուր) և Քուռկիկ Ջալալին: Առասպելական այդ ձին ուներ աննկարագրելի արտասովոր հատկություններ, քանզի մարդկային լեզվով խոսելուց բացի նա նաև կարողանում էր անձայրածիր ճանապահներ անցնել և թռչել մինչև առ արեգակ: Կենսատու ջրերում Սանասարը ձեռք է բերում նաև անխոցելի զենք ու զրահ, իսկ բազուկի վրա դրոշմվում է յուրօրինակ մի խաչ: Ծովի ջուրը Սանասարին դարձնում է իրական մի հսկա, որ անգամ եղբայրը նրան չի ճանաչում և վերջինիս տեսնելով ահարկու փախչում է: Շուտով նա իմանում է եղելությունը, որից հետո միայն քաջազունները շարունակում են իրենց ճանապարհը: Շուտով եղբայրներն ականատես են լինում, թե ինչպես է լեռներից հոսող մի ուժգին առու կտրում-անցնում մի մեծ գետի ամբողջ հոսանքը: Գայթակղված այդ ջրի գորությունից՝ Սանասարն ու Բաղդասարը գտնում են առվի հոսքի սկզբնակետը և վերջինիս ակունքների վրա վիթխարի ապառաժներից ամբողջ կառուցում: Շուտով Սանասարն ու Բաղդասարը ձեռնամուխ են լինում իրենց հիմնադրած ամրոցի հարակից տարածքների բնակեցմանը և այդ նպատակով հայոց աշխարհից 40 ընտանիք բերելով հաստատում են այստեղ: Այսպիսով, առասպելական տեսանկյունից՝ սա է Սասուն քաղաքի հիմնադրման պատմությունը:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո եղբայրները ցանկանում են անվանում տալ իրենց հիմնադրած բնակավայրին: Հենց այս ժամանակ էլ նրանց պատահաբար հանդիպում են ծերունի մի սերմնացանի, որից էլ խնդրում են անուն մտածել բարձրաբերձ և վահաշուք քաղաք-ամրոցի համար: Այսպիսով, հենց այդ ծերունին էլ քաղաքի անունը կնքում է Սասուն, քանի որ այն կառուցված էր սասան քարերից: Նա իր խոսքը մեկնաբանում է հետևյալ կերպ.

Դուք են սասուն քարեր ինչպես ս հաներ եք էս վերին տեղ,  
 Ու քարե սան սուն եք զարկե. էս տո՛ւն շեք շինե դուք.  
 Ապա սասուն մ'եք շինե: Վա՛, քանի սասուն բերդ մի.էս տուն չէ, էս սասուն է:  
 Սանասար ասաց.— Բա՛վ է, պապիկ, էլ ձեն մի՛ հանի. էլ անուն մի՛ դնի: Ա՛յ պապի, անուն դրվավ.  
 Անուն եղավ Սասուն: Քանց եղա ավել ի՞նչ անուն:  
 Որ դու ասիր՝ սասուն քարեր, քարե սանսուն եք զարկե.  
 Մեր բերդի անուն եղավ Սասուն, Սպարուս  
 - Ծերունին Սասուն քաղաքի մասին

Ամեր տուն անուն՝ Սասուն տուն:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո եղբայրները ցանկանում են անվանում տալ իրենց հիմնադրած բնակավայրին: Հենց այս ժամանակ էլ նրանց պատահաբար հանդիպում են ծերունի մի սերմնացանի, որից էլ խնդրում են անուն մտածել բարձրաբերձ և վահաշուք քաղաք-ամրոցի համար: Այսպիսով, հենց այդ ծերունին էլ քաղաքի անունը կնքում է Սասուն, քանի որ այն կառուցված էր սասան քարերից: Նա իր խոսքը մեկնաբանում է հետևյալ կերպ .

Դուք են սասուն քարեր ինչպե՞ս հաներ եք են վերին տեղ, Ու քարե սան սուն եք զարկե. Էս տո՛ւն շեք շինե դուք. Ապա սասուն մ'եք շինե: Վա՛, քանի սասուն բերդ մի.Էս տուն չէ, էս սասուն է: Սանասար ասաց.— Բա՛վ է, պապիկ, էլ ձեն մի՛ հանի. էլ անուն մի՛ դնի: Ա՛յ պապի, անուն դրվավ. Անուն էղավ Սասուն: Քանց էդա ավել ի՞նչ անուն: Որ դու ասիր՝ սասուն քարեր, քարե սանսուն եք զարկե. Մեր բերդի անուն էղավ Սասուն, Սասուն,

Մեր տան անուն՝ Սասնա տուն:

- Ծերունին Սասուն քաղաքի մասին

Սասունի հիմնադրումից հետո քաջագունները մեկնում են Պղնձե քաղաք, որտեղ Սանասարն ամուսնանում է այդ քաղաքի արքայի դստեր՝ Քառսուն-Ճուղ-Ծամ Դեղձուն-Ծամի կամ պարզապես Դեղձունի հետ: Վերջինս Սանասարին տեսել էր իր երագում և վերջինիս այդ մասին տեղեկացրել էր նամակի միջոցով: Բաղդասարն էլ իր հերթին ամուսնանում է Դեղձուն-Ծամի քրոջ հետ և մեկնում Բաղդադ: Սանասարն ու Դեղձունն ունենում են երեք որդի՝ Մհերը, Օհանը և Ցռան Վերզն: Էպոսի վիպական երկրորդ ճյուղում Սանասարի և Բաղդասարի գործը շարունակում է եղբայրներից ավագի որդին՝ Մհերը:

### **Առյուծաձև Մհեր. Սասունի ազատումը Մըսրի հարկերից**

Հոր պես Մհերը ևս անմարդկային զորության տեր պատանի էր և մեծանում էր օր օրի: Դեռահաս Մհերը արմատախիլ էր անում ծառերը և դրանք թեթև թղթի պես բարձում, իսկ ձի հեծնելու մասին անգամ չէր մտածում, քանզի ցանկացած նժույզ ճկվում էր նրա զորությունից: Ըստ ժողովրդական բանասիրության՝ Մհերը պատրաստ էր իր ամբողջ ուժն ու եռանդը ներդնել հանուն հայրենիքի և հայրենյաց ժողովրդի բարօրության: Դրա վառ ապացույցն է երիտասարդ Մհերի և մարդակեր առյուծի մենամարտը: Այդ առյուծը ներխուժել էր Սասնա աշխարհ և նստելով դեպի ջրհորները տանող ճանապարհին ժողովրդին մատնել էր սովի: Տեսնելով այս ամենը՝ Մհերը խիզախորեն գնում է առյուծին ընդառաջ և երկու կես անում վերջինիս: Ժողովուրդը ցնծում է այս կապակցությամբ և Սանասարի որդուն շնորհում «Առյուծաձև» կամ պարզապես «Առյուծ Մհեր» պատվանուններով: Մարդակեր առյուծին հաղթելուց հետո Մհերը ստանում է հորը պատկանող Քուռկիկ Չալալին, թուր կեծակին և խաչ պատերազմին: Այս ամենից հետո Մեծ Մհերը դառնում է Սասնա տան ղեկավար:

### **Առյուծաձև Մհեր. Սասունի ազատումը Մըսրի հարկերից**

Հոր պես Մհերը ևս անմարդկային զորության տեր պատանի էր և մեծանում էր օր օրի: Դեռահաս Մհերը արմատախիլ էր անում ծառերը և դրանք թեթև թղթի պես բարձում, իսկ ձի հեծնելու մասին անգամ չէր մտածում, քանզի ցանկացած նժույզ ճկվում էր նրա զորությունից: Ըստ ժողովրդական բանասիրության՝ Մհերը



պատրաստ էր իր ամբողջ ուժն ու եռանդը ներդնել հանուն հայրենիքի և հայրենյաց ժողովրդի բարօրության: Դրա վառ ապացույցն է երիտասարդ Միերի և մարդակեր առյուծի մենամարտը: Այդ առյուծը ներխուժել էր Սասնա աշխարհ և նստելով դեպի ջրհորները տանող ճանապարհին ժողովրդին մատնել էր սովի: Տեսնելով այս ամենը՝ Միերը խիզախորեն գնում է առյուծին ընդառաջ և երկու կես անում վերջինիս: Ժողովուրդը ցնծում է այս կապակցությամբ և Սանասարի որդուն շնորհում «Առյուծաձև» կամ պարզապես «Առյուծ Միեր» պատվանուններով: Մարդակեր առյուծին հաղթելուց հետո Միերը ստանում է հորը պատկանող Քուռկիկ Ջալալին, թուր կեծակին և խաչ պատերազմին: Այս ամենից հետո Մեծ Միերը դառնում է Սասնա տան ղեկավար:

Շուտով գալիս է Միերի ամուսնության ժամանակը. նրա ավագ եղբայրը՝ Օհանն և քեռին՝ Թորոսը, գնում են Կարս՝ Թևաթորոս թագավորի դստեր ձեռքը ուզելու, սակայն իմանում են, որ նրա արքայադուստրը գտնվում է Սպիտակ դևի գերության մեջ: Շուտով լուրը հասնում է Առյուծաձև Միերին, որը ժամանելով Կարս՝ սպանում է հրեշավոր դևին և նրա փահլևաններին, իսկ չքնադագեղ արքայադուստր Արմաղանին իրեն առնում է կնության: Սակայն, այս ժամանակահատվածում Սասունը Մըսրին դարձել էր հարկատու, քանի որ Սանասարի մահվանից հետո՝ մինչև Միերի մեծանալը, ոչ ոք չէր կարողացել պահպանել երկրի հզորությունը: Հերթական տարում Սասուն են ժամանում Մըսրի արաբ հարկահանները, որոնց Միերը հրաժարվում է հարկ վճարել: Քեռի Թորոսը Միերին հորդորում էր մեղայականով գնալ Մըսր ու Մելիքին խնդրել որպեսզի նա կրճատի հարկերը, սակայն հայոց քաջագունն անում է բուն հակառակը՝ հեծում է Քուռկիկ Ջալալին և ուղևորվում արաբական աշխարհ: Մինչ այդ նա նաև իմացել էր այն մասին, որ Մըսրա մեծ Մելիքն իրեն ձեռնոց է նետել և հրավիրել Մոսուլ՝ կովի: Մըսրում Մելիքը միանգամից նկատում է Սանասարի որդու հպարտ կեցվածքն ու արիությունը և միանգամից կանչում մարտադաշտ: Տեսնելով, որ չի կարողանա հաղթել Միերին՝ Մըսրա Մելիքը դաշն է կնքում հայոց դյուցազնի հետ և թելադրում իր պայմանը: Ըստ այդ պայմանի՝ իրենցից ով առաջինը մահանա, պարտավորվում է մինչև իր կյանքի վերջը տիրություն անել կովում զոհվածի ընտանիքին՝ կնոջն ու երեխաներին, և իհարկե՝ երկիրը: Բացի այդ, Մելիքը Սասունին ազատում է բոլոր տեսակի հարկերից և դաշնակցային կապեր պաշտպանում Սասնա աշխարհի հետ:

## Մելիքի և Միերի պայմանավորվածությունը՝ ըստ «Սասունցի Դավիթ» համահավաք բնագրի

Մըսրա Մելիք տեսավ, որ Միեր չի հաղթվի. տեսավ՝ Միեր շատ ազնավուր,  
հաստա՛տ մարդ է.

Ասաց. Սասնա Միեր, քելե մենք մի պայման կապենք: Ես կասեի՝ մեջ  
աշխարքին ինձնեն ուժեղ մարդ մի չկար՝ ամա ես ու դու չը կարցանք իրար  
հաղթենք:

Ասաց, ինչքան խարջ կա ձեզի՝ ամեն ես քեզի բաշխեցի: Էլ Սասունն ինձ  
խարջադար չի: Քոնն են Սասնա ամեն հողեր:

Գընա, կե՛ր, խրմի՛, վայելե՛: Մենակ՝ կովի վախտ որ ըլի՝ մենք իրարու  
պառեկ ըլնինք: Ասաց. թե ես մեռնեմ՝ զիմ թագուհին ու էրեխեք հանձնեմ  
քեզի, թե դո՛ւ մեռար՝ զքոն հանձնի մեզի:

Որ խալխ չ՛ասի, մնացեր են որբ: Մատներ կտրին, արուն արնի  
խառնեցին, պայման դրին, էղան աղբեր:

Մըսրա Մելիք ես բան մաքուր սրտով չասաց. Էն Միերից վախցավ,  
կեղծավորցավ:

## Մելիքի և Միերի պայմանավորվածությունը՝ ըստ «Սասունցի Դավիթ» համահավաք բնագրի

Մըսրա Մելիք տեսավ, որ Միեր չի հաղթվի. տեսավ՝ Միեր շատ ազնավուր,  
հաստա՛տ մարդ է. Ասաց. Սասնա Միեր, քելե մենք մի պայման կապենք: Ես կասեի՝  
մեջ աշխարքին ինձնեն ուժեղ մարդ մի չկար՝ ամա ես ու դու չը կարցանք իրար  
հաղթենք: Ասաց, ինչքան խարջ կա ձեզի՝ ամեն ես քեզի բաշխեցի: Էլ Սասունն ինձ  
խարջադար չի: Քոնն են Սասնա ամեն հողեր: Գընա, կե՛ր, խրմի՛, վայելե՛: Մենակ՝  
կովի վախտ որ ըլի՝ մենք իրարու պառեկ ըլնինք: Ասաց. թե ես մեռնեմ՝ զիմ  
թագուհին ու էրեխեք հանձնեմ քեզի, թե դո՛ւ մեռար՝ զքոն հանձնի մեզի: Որ  
խալխ չ՛ասի, մնացեր են որբ: Մատներ կտրին, արուն արնի խառնեցին,  
պայման դրին, էղան աղբեր:

Մըսրա Մելիք ես բան մաքուր սրտով չասաց. Էն Միերից վախցավ, կեղծավորցավ:

Ժամանակ անց Մըսրա Մելիքը վախճանվում է: Մահից առաջ նա իր կնոջը խնդրել էր մերձենալ Միերի հետ, որպեսզի նրանց սերունդը մեծանալով գորեղանա և պաշտպանի Մըսրը: Հավատարիմ մնալով Մելիքին տված ուխտին՝ Միերը պարտավորվում է մեկնել արաբական աշխարհ, որպեսզի տեսակցի Մելիքի այրիացած կնոջը: Արմաղանն ամեն կերպ ցանկանում է կանխել ամուսնու մենկնումը Իսմիլ խանումի մոտ, սակայն վերջինս անդրդվելի էր: Նա հեծում է Քուռկիկ Ջալալին աստվածային նժույգով սրընթաց շարժվում Մըսր: Շուտով նա հանդիպում է Մելիքի այրի կնոջը, որը նենգաբար գինով արբեցնում է Միերին և վերջինս հակառակ իր կամքին հղիացնում է Իսմիլին: Այդպես, արևելքի տիրուհին երկար ժամանակ Միերին գինով պահում է Մըսրում և ծնվում է նրանց որդին, որ պիտի դառնար Մըսրի տիրակալը:

Ժամանակ անց Մըսրա Մելիքը վախճանվում է: Մահից առաջ նա իր կնոջը խնդրել էր մերձենալ Միերի հետ, որպեսզի նրանց սերունդը մեծանալով գորեղանա և պաշտպանի Մըսրը: Հավատարիմ մնալով Մելիքին տված ուխտին՝ Միերը պարտավորվում է մեկնել արաբական աշխարհ, որպեսզի տեսակցի Մելիքի այրիացած կնոջը: Արմաղանն ամեն կերպ ցանկանում է կանխել ամուսնու մենկնումը Իսմիլ խանումի մոտ, սակայն վերջինս անդրդվելի էր: Նա հեծում է Քուռկիկ Ջալալին աստվածային նժույգով սրընթաց շարժվում Մըսր: Շուտով նա հանդիպում է Մելիքի այրի կնոջը, որը նենգաբար գինով արբեցնում է Միերին և վերջինս հակառակ իր կամքին հղիացնում է Իսմիլին: Այդպես, արևելքի տիրուհին երկար ժամանակ Միերին գինով պահում է Մըսրում և ծնվում է նրանց որդին, որ պիտի դառնար Մըսրի տիրակալը:

Մըսրա Մելիքի երակներում եռում է հսկա հոր արյունը, նա ժառանգել է նաև նրա ուժը, իսկ սրտում զգում է մարդկանց և բոլոր ժողովուրդների վրա իշխելու բուռն ծարավ, որը նրան ներշնչել է իր մայրը: Լույս աշխարհ բերելով իր այդ որդուն՝ Միերը դրանով իսկ Իսմիլ խանումի հոգում ծնում է այն հույսը, թե *«հիմա կշողշողա Մըսրա աստղը, իսկ Մասնա աստղը կխավարի»*: Իսմիլի կողմից Մելիքին տրվող այդ խրատները, իբրև հրաշագործ հակաթույն, սթափեցնում են Միերին, և նա իր հոր հրեղեն ձիով Մըսրից սլանում է հայրենյաց Մասուն: Միերը վերադառնում է իր սիրեցյալ կնոջ մոտ, որը երդվել է քառասուն տարի հրաժարվել ամուսնական կյանքից: Բայց Միերը խախտել է տալիս նրան այդ երդումը, ցանկանալով վառել Մասնա ճրագը, որպեսզի վերջինիս լույսից խավարի Մըսրա աստղը, և իր ուստրերն ու դուստրերը պաշտպան ունենան այն աղետների դեպքում, որ կարող է նրանց գլխին բերել Մըսրա Մելիքը: Սակայն հայ փափկասուն տիկնոջ երդմնազանցությունը առաջացնում է Աստծո զայրույթը և վերջիններս մնում են

անժառանգ: Աստծո հետ կապ հաստատելու նպատակով Մեծ Միերը կառուցում է Մարութա Սուրբ Աստվածածին վանքը, որի միջոցով կապ է հաստատում տիրոջ հետ և վերջինից արու գավակ խնդրում: Սակայն Աստված հայտնում է, որ դա հնարավոր կլինի միայն այն ժամանակ, երբ տղայի ծնվելուց անմիջապես հետո նա և իր կինը մահանան: Անձնագրի Միերն ու Արմադանը շուտով մահանում են, սակայն լույս աշխարհ է գալիս նրանց խարտյաշ որդին, որին կնքում են Դավիթ:

### **Սասունցի Դավիթի ծնունդ և մանկապատանեկություն**

Երբորդ ճյուղում ծնվում է էպոսի գլխավոր հերոսը՝ Դավիթը: Արմադանի և Միերի մահից հետո Դավիթ խնամքը մնում է Ձենով Օհանի վրա: Մանկահասակ սասնեցուն կերակրելու համար վերջինս տակնուվրա է անում ողջ Սասունը՝ հավաքելով բոլոր կաթնատու մայրերին: Սակայն Դավիթը հրաժարվում է բոլորի կաթից, և Օհանը վճռում է նրան ուղարկել Մըսր՝ Իսմիլ խանումի մոտ: Բանն այն էր, որ Իսմիլը ժամանակին կիսել էր մահիճը Դավիթի հոր՝ Առյուծաձև Միերի հետ և հենց այս հանգամանքով էլ պայմանավորված էր Օհանի տրամաբանական որոշումը: Երկար և տաժանակիր ճանապարհը ողբերգական կարող էր լինել նորածին տղայի համար, իսկ Դավիթին Մըսր հասնելու լավագույն տարբերակը Քուռկիկ Ջալալին էր: Տղային կապում են Քուռկիկ Ջալալու մեջքին, և սա մանկանը հասցնում է Իսմիլ խանումի մոտ: Դավիթը սնվում է նրա կաթով, ինչպես և Սասունից բերած յուղով ու մեղրով, հասակ առնում իբրև մի դյուցազուն: Իր նախնիների պես Դավիթը ևս աճում էր ժամով և վայրկյանով: Միերի որդին չորս տարեկան հասակում անգամ խաղի ժամանակ բռնում ու դեն է շարտում Մըսրա Մելիքի նետած մկունդը, որը հեղինակագրկում է Մըսրա գահի հետագա հավակնորդին: Մըսրա Մելիքը, տեսնելով Դավիթի ուժն ու դյուցազնությունը, նրան փակում է մթին հայկական գնդանում՝ ցանկանալով պատժել վերջինիս: Որպեսզի մանուկ հսկան զրկված լինի ամեն տեսակի փախչելու հնարավորությունից, նրա ճաշի միսն անգամ ոսկրահան էին անում: Մի անգամ էլ սակայն պալատականները վիրավորում են սպասավորին և սա էլ բարկությունից Դավիթին ոսկրոտ միս է տալիս: Դավիթը ճաշն ուտում է և ոսկորը շարտում պատի կողմն այնպիսի ուժով, որ գնդանի պատը քանդվում է:

Տեսնելով, որ նրան անագատության մեջ պահելն անիմաստ է՝ Մըսրա Մելիքը վճռում է ազատվել վերջինիցս: Երկու հոգու ուղեկցությամբ Դավիթն ուղարկում են դեպի Սասուն՝ նրան ճանապարհին սպանելու մտադրությամբ: Սակայն ոչ մի դեպքում դա չի ստացվում, քանի որ սասնա փահլևանը կռահում է ուղեկիցների զագրելի մտադրության մասին և ազատվում նրանցից: Շուտով Դավիթը ժամանում է Սասուն, ուր հանդիպելով հորեղբորը ծանոթանում է իր ընտանիքի և տոհմի պատմությանը: Կարճ ժամանակում Դավիթը Սասունում մտնում է կյանքի բնականոն հունի մեջ, սակայն քանի որ նա չէր կարողանում հանգիստ շփվել իր հասակակիցների հետ, նրան կարգում են գառնարած: Դավիթը, գառների և ուլերի հոտն առաջն արած՝ սարերն է բարձրանում: Քնով է անցնում, գառներն ու ուլերը ցրվում են, իսկ երբ մանուկ հովիվը նրանց ուզում է հավաքել, չի տարբերում թե որոնք են իրենը, և թե

որոնք են անտառի գազանները: Դավիթը գազաններին քշում-բերում է քաղաք, ապա դիմում նաև դրանց տերերին հետևյալ խոսքերով.

Այսպես Դավիթը փորձում է բազում զբաղմունքներ, սակայն վերջ ի վերջո մի պատավի խորհրդով, որի արտը տրորել էր, որոշում է դառնալ մարտիկ և պաշտպանել հայրենյաց երկրի սահմանները: Իր նպատակի իրագործման ճանապարհին Դավթին օգնում է իր հորեղբայրը՝ Ձենով Օհանը:

**Դավթի կողմից Մարութա վանքի վերակառուցում  
և Մըսրա Մելիքի հետ մենամարտ**

Չափահասության տարիքում Դավիթը երազ է տեսնում, որտեղ վերջինիս առաջ առաքելություն է դրվում վերակառուցել հոր կողմից հիմնադրված Մարութա Սուրբ Աստվածածին եկեղեցին: Սակայն վանքի հիմքերն անգամ չէին պահպանվել և Դավիթը տեսիլքի միջոցով իմանում է, որ հատակագծի հիմքում պետք է դրվի իր թուրը: Եկեղեցին կառուցելուց հետո Դավիթը հասունանում է և սկսում մտածել հայրենիքի շենացման ու բարգավաճման մասին: Սասունի շենացման լուրը լսելուց հետո Մըսրա Մելիքը լցվում է գայրույթով և իր հարկահաններին ուղարկում այնտեղ՝ յոթ տարվա հարկը գանձելու: Տուն վերադարձած պատանին տեսնում է, որ հորեղբայրը, Սասունն ավերելու սպառնալիքից ահաբեկված, արաբների համար ոսկի է չափում: Նա արագորեն շտապում է հարկահաններին ընդառաջ և

**Դավթի կողմից Մարութա վանքի վերակառուցում և Մըսրա Մելիքի հետ մենամարտ**

Չափահասության տարիքում Դավիթը երազ է տեսնում, որտեղ վերջինիս առաջ առաքելություն է դրվում վերակառուցել հոր կողմից հիմնադրված Մարութա Սուրբ Աստվածածին եկեղեցին: Սակայն վանքի հիմքերն անգամ չէին պահպանվել և Դավիթը տեսիլքի միջոցով իմանում է, որ հատակագծի հիմքում պետք է դրվի իր թուրը: Եկեղեցին կառուցելուց հետո Դավիթը հասունանում է և սկսում մտածել հայրենիքի շենացման ու բարգավաճման մասին: Սասունի շենացման լուրը լսելուց հետո Մըսրա Մելիքը լցվում է գայրույթով և իր հարկահաններին ուղարկում այնտեղ՝ յոթ տարվա հարկը գանձելու: Տուն վերադարձած պատանին տեսնում է, որ հորեղբայրը, Սասունն ավերելու սպառնալիքից ահաբեկված, արաբների համար ոսկի է չափում: Նա արագորեն շտապում է հարկահաններին ընդառաջ և սարսափելիորեն ջարդում նրանց մոռուները:

Որոտաձայն մարտակոչով և սեփական արյունով գրած հրովարտականով Մըսրա Մելիքը իր հպատակ բոլոր երկրներից գորք է հավաքում և գնում Սասնա դեմ պատերազմելու: Թշնամու դեմ ելնում է Դավիթը՝ Քեռի Թորոսի և Նրա 39 որդիների հետ: Դավիթը մարտի դաշտ դուրս գալուս աղաղակում է այսպես.

...Ով քնած է՝ արթուն կացեք, ով արթուն է՝ ձիեր թամբեք,

Ով թամբել է գենքեր կապեք, ով կապել է՝ ելեք, հեծեք, Չասեք Դավիթ գող-գող եկավ, Գող-գող գնաց...

Հայոց սակավաթիվ քաջերը սկսում են աջ ու ձախ կոտորել արաբների անծայրածիր բանակին, մինչև Մըսրա Մելիքի ճամբարից դուրս է գալիս մի ծերունի և հորդորում հարցը լուծել հավասար հարթության վրա՝ արքան ընդդեմ արքայի, քանզի նրանց տարաձայնությունների պատճառով կարող էին տուժել հազարավոր մարդիկ: Այսպիսով նշմարվում է Դավթի և Մըսրա Մելիքի մենամարտը, որը տեղի է ունենում նույն օրը: Քուռկիկ Ջալալին հեծած Սասնա Դավիթը թուր կեծակիի ուժգին հարվածով երկու կես է անում Մըսրա Մելիքին և ազատ արձակում նրա բանակին՝ նախազգուշացնելով, որ այլևս երբեք չհարձակվեն Սասնա վրա: Հաղթական պատերազմից հետո Դավիթն ամուսնանում է գեղեցկուհի

Որոտաձայն մարտակոչով և սեփական արյունով գրած հրովարտականով Մըսրա Մելիքը իր հպատակ բոլոր երկրներից գորք է հավաքում և գնում Սասնա դեմ պատերազմելու: Թշնամու դեմ ելնում է Դավիթը՝ Քեռի Թորոսի և նրա 39 որդիների հետ: Դավիթը մարտի դաշտ դուրս գալուս աղաղակում է այսպես.

... Ով քնած է՝ արթուն կացեք, ով արթուն է՝ ձիեր թամբեք, Ով թամբել է գենքեր կապեք, ով կապել է՝ ելեք, հեծեք, Չասեք Դավիթ գող-գող եկավ, Գող-գող գնաց. . .

Հայոց սակավաթիվ քաջերը սկսում են աջ ու ձախ կոտորել արաբների անծայրածիր բանակին, մինչև Մըսրա Մելիքի ճամբարից դուրս է գալիս մի ծերունի և հորդորում հարցը լուծել հավասար հարթության վրա՝ արքան ընդդեմ արքայի, քանզի նրանց տարաձայնությունների պատճառով կարող էին տուժել հազարավոր մարդիկ: Այսպիսով նշմարվում է Դավթի և Մըսրա Մելիքի մենամարտը, որը տեղի է ունենում նույն օրը: Քուռկիկ Ջալալին հեծած Սասնա Դավիթը թուր կեծակիի ուժգին հարվածով երկու կես է անում Մըսրա Մելիքին և ազատ արձակում նրա բանակին՝ նախազգուշացնելով, որ այլևս երբեք չհարձակվեն Սասնա վրա: Հաղթական պատերազմից հետո Դավիթն ամուսնանում է գեղեցկուհի Խանդուր խանումի հետ:

Մի հանգամանք Դավթի կյանքում ճակատագրական է լինում: Նա անակնկալ սիրահարվում է Չմշկիկ-սուլթանին և խոստանում նրա մոտ վերադառնալ յոթ օր հետո, բայց այդ մասին հիշում է միայն յոթ տարի անց, երբ Չմշկիկից արդեն ծնված է լինում իր դուստրը: Կյանքի վերջին տարում Դավիթը Սասուն քաղաքի ճանապարհին մարտի է բռնվում սեփական որդու՝ Միերի հետ և անհծում նրան այսպես. «անմահ լինես և անժառանգ»: Վերադառնալով Չմշկիկ-սուլթանի մոտ, Դավիթը սպանվում է իր հարսացույց ստեղծող ստրուկներից:

Մի հանգամանք Դավթի կյանքում ճակատագրական է լինում: Նա անակնկալ սիրահարվում է Չմշկիկ-սուլթանին և խոստանում նրա մոտ վերադառնալ յոթ օր հետո, բայց այդ մասին հիշում է միայն յոթ տարի անց, երբ Չմշկիկից արդեն ծնված է լինում իր դուստրը: Կյանքի վերջին տարում Դավիթը Սասուն քաղաքի ճանապարհին մարտի է բռնվում սեփական որդու՝ Միերի հետ և անհծում նրան այսպես. «անմահ լինես և անժառանգ»: Վերադառնալով Չմշկիկ-սուլթանի մոտ, Դավիթը սպանվում է իր հարսագատ աղջկա արձակած նետից:

### Պատմական ժամանակահատված

«Սասնա ծռեր» էպոսը գլխավորապես ձևավորվել է զարգացած միջնադարում՝ արաբական արշավանքների ընթացքում: Բայց, եթե ուշադիր հետևենք հերոսների և սյուժեի զարգացմանը պարզ է դառնում, որ այն հայ ժողովրդի կազմավորման վաղնջական ժամանակներին է անդրադառնում: Էպոսի յուրաքանչյուր հերոս, ունի առանցքային նշանակություն և նրանք բացահայտում են աստղագիտական և մաթեմատիկական մի շարք գիտելիքներ, որոնք անընդմեջ կարող ենք հանդիպել էպոսում:

Պատմական ժամանակահատված

«Սասնա ծռեր» էպոսը գլխավորապես ձևավորվել է զարգացած միջնադարում՝ արաբական արշավանքների ընթացքում: Բայց , եթե ուշադիր հետևենք հերոսների և այուժեի զարգացմանը պարզ է դառնում , որ այն հայ ժողովրդի կազմավորման վաղնջական ժամանակներին է անդրադառնում : Էպոսի յուրաքանչյուր հերոս , ունի առանցքային նշանակություն և նրանք բացահայտում են աստղագիտական և մաթեմատիկական մի շարք գիտելիքներ, որոնք անընդմեջ կարող ենք հանդիպել էպոսում :

### **Նախնական հիշատակ**

Էպոսի հերոսներից Սանասարի և Բաղդասարի մասին հնագույն գրավոր ավանդությունը պահպանվել է Աստվածաշնչում (Թագավորաց չորրորդ, ԺԹ), հետագայում Մովսես Խորենացու (գիրք Ա, ԻԳ) և Թովմա Արծրունու (Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան) երկերում: Իսկ Դավթի և Խանդութի մասին գրույցների, Սասունում եղած իրեղեն ապացույցների հիշատակություններ կան 16-րդ դարի պորտուգալացի ճանապարհորդների (Ա.Տենրեյրո, Մ.Աֆոնսո) ուղեգրական նոթերում: Ուշ հայկական աղբյուրների թռուցիկ հիշատակությունները վերաբերում են 19-րդ դարում հանդիպող վեպի հերոսների անուններով տեղավայրերին (Խանդութի ձոր, Խանդութի բերդ, Դավթի թշնամիների գերեզմանները Խլաթի մոտակայքում):

### **Նախնական հիշատակ**

Է պոսի հերոսներից Սանասարի և Բաղդասարի մասին հնագույն գրավոր ավանդությունը պահպանվել է Աստվածաշնչում (Թագավորաց չորրորդ, ԺԹ), հետագայում Մովսես Խորենացու (գիրք Ա, ԻԳ) և Թովմա Արծրունու (Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան) երկերում: Իսկ Դավթի և Խանդութի մասին գրույցների, Սասունում եղած իրեղեն ապացույցների հիշատակություններ կան 16-րդ դարի պորտուգալացի ճանապարհորդների (Ա.Տենրեյրո, Մ.Աֆոնսո) ուղեգրական նոթերում: Ուշ հայկական աղբյուրների թռուցիկ հիշատակությունները վերաբերում են 19-րդ դարում հանդիպող վեպի հերոսների անուններով տեղավայրերին (Խանդութի ձոր, Խանդութի բերդ, Դավթի թշնամիների գերեզմանները Խլաթի մոտակայքում):



## **Գրառումներն ու հրատարակություններ**

«Սասնա ծռերը» որպես էպոս իր 4 ճյուղերով հանդերձ, ստեղծվել ու զարգացել է հնագույն շրջանից և իր վերջնական և ավարտուն տեսքը ստացել 8-րդ դարում: Էպոսի Սասունցի Դավիթ ճյուղը իր մեջ պահել է արաբական ազատագրական պայքարում աչքի ընկած ապստամբություններից մեկի՝ Տարոնի ապստամբների կատարած սխրագործությունները, միայն այն տարբերությամբ, որ արաբ ոստիկանին սպանողը ոչ թե Դավիթ Արքայիկն էր, այլ Խուբեցի Հովնանը: Էպոսի մնացած երեք ճյուղերում մենք կարող ենք գտնել հայ առասպելաբանության, հասարակության դասակարգերի, հնագույն դիցարանի մասին տեղեկություններ, որոնք պետք է օգտագործվեն անցնելով խորաքննին ուսումնասիրություններից հետո միայն: Եվրոպային էպոսը հայտնի է դարձել 16-րդ դարում պորտուգալացի ճանապարհորդներ՝ Մեստրե Աֆոնսոյի և Անտոնիո Տենրեյրոյի շնորհիվ:

## **Գրառումներն ու հրատարակություններ**

«Սասնա ծռերը» որպես էպոս իր 4 ճյուղերով հանդերձ, ստեղծվել ու զարգացել է հնագույն շրջանից և իր վերջնական և ավարտուն տեսքը ստացել 8-րդ դարում: Էպոսի Սասունցի Դավիթ ճյուղը իր մեջ պահել է արաբական ազատագրական պայքարում աչքի ընկած ապստամբություններից մեկի՝ Տարոնի ապստամբների կատարած սխրագործությունները, միայն այն տարբերությամբ, որ արաբ ոստիկանին սպանողը ոչ թե Դավիթ Արքայիկն էր, այլ Խուբեցի Հովնանը: Էպոսի մնացած երեք ճյուղերում մենք կարող ենք գտնել հայ առասպելաբանության, հասարակության դասակարգերի, հնագույն դիցարանի մասին տեղեկություններ, որոնք պետք է օգտագործվեն անցնելով խորաքննին ուսումնասիրություններից հետո միայն: Եվրոպային էպոսը հայտնի է դարձել 16-րդ դարում պորտուգալացի ճանապարհորդներ՝ Մեստրե Աֆոնսոյի և Անտոնիո Տենրեյրոյի շնորհիվ:

«Սասնա ծռերը» հայտնաբերել և ամբողջությամբ գրառել է Գարեգին Սրվանձտյանը 1873 թվականին, Մշո Առնիստ գյուղում, երեսփոխան Կրպոյից և հրատարակել Կոստանդնուպոլիսում («Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ», 1874 թվական): Երկրորդ տարբերակը 1886 թվականին էջմիածնում գրի է առել Մանուկ Աբեղյանը՝ Նախո քեռի Մոկացուց և հրատարակել Շուշիում («Դավիթ և Մհեր», 1889 թ.): Նորանոր տարբերակներ են գրառել Գ. Հովսեփյանը, Խ. Դադյանը, Ս. Հայկունին, Ա. Աբեղյանը, Ե.Լալայանը, Կ. Մելիք-Օհանջանյանը, Ա. Ղանալանյանը և ուրիշներ: 1938-1939 թվականներին «Սասնա ծռերի» 1000-ամյա հորեյանի առթիվ մինչ այդ գրառված 60-ից ավելի պատումների հիման վրա, Մ. Աբեղյանի, Գ. Աբովի, Ա. Ղանալանյանի խմբագրությամբ հյուսվել-կազմվել է մեկ միասնական համահավաք բնագիր («Սասունցի Դավիթ», 1939 թ.): Վեպի մեկ այլ համահավաք բնագիր է կազմել

«Սասնա ծռերը» հայտնաբերել և ամբողջությամբ գրառել է Գարեգին Սրվանձտյանը 1873 թվականին, Մշո Առնիստ գյուղում, երեսփոխան Կրպոյից և հրատարակել Կոստանդնուպոլիսում («Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ», 1874 թվական): Երկրորդ տարբերակը 1886 թվականին էջմիածնում գրի է առել Մանուկ Աբեղյանը՝ Նախո քեռի Մոկացուց և հրատարակել Շուշիում («Դավիթ և Մհեր», 1889 թ.): Նորանոր տարբերակներ են գրառել Գ. Հովսեփյանը, Խ. Դադյանը, Ս. Հայկունին, Ա. Աբեղյանը, Ե.Լալայանը, Կ. Մելիք-Օհանջանյանը, Ա. Ղանալանյանը և ուրիշներ: 1938-1939 թվականներին «Սասնա ծռերի» 1000-ամյա հորեյանի առթիվ մինչ այդ գրառված 60-ից ավելի պատումների հիման վրա, Մ. Աբեղյանի, Գ. Աբովի, Ա. Ղանալանյանի խմբագրությամբ հյուսվել-կազմվել է մեկ միասնական համահավաք բնագիր («Սասունցի Դավիթ», 1939 թ.): Վեպի մեկ այլ համահավաք բնագիր է կազմել Տ. Զիթունին Փարիզում («Սասունական», 1942 թ.):

## Վիպասացների հայրենիքը

Էպոսի վիպասացների բուն հայրենիքը Վանա լճի ավազանն ու նրանից հարավ-արևմուտք և հյուսիս-արևելք ընկած գավառներն են՝ Սասուն, Մուշ, Բաղեշ, Մոկք, Շատախ, Վան, Հայոց ձոր, Խլաթ, Արճեշ, Մանազկերտ, Ալաշկերտ, Բայազետ: XIX-XX դդ. գավառներից պանդխտած և գաղթած վիպասացների ու նրանց սերունդների միջոցով «Սասնա ծռերն» անցել է Արևելյան Հայաստան, մասամբ պարսկահայերի մեջ և Թիֆլիս: Դրանց լեզուն հիմնականում արևմտահայ բարբառներն ու ենթաբարբառներն են, երբեմն նկատելի է նաև արևելահայ բարբառների ազդեցությունը: «Սասնա ծռերը» ավանդվել է բանավոր և նրա բնագրերը XIX-XX դդ. տարբեր վիպասաններից գրառված տարբերակներ են, որոնք կառուցվածքով, լեզվաբարբառային և վիպական ներքին հատկանիշներով բաժանվում են տիպաբանական-տեղագրական երեք մեծ խմբի՝ Սասնա, Մշո և Մոկաց: Սրանցից բացի, կան նաև խառը: Նախնական պարզ ու կուռ տիպը, հավանաբար, եղել է Սասունինը, որի տարածումից էլ ստեղծվել են մյուս տարբերակները:

## Վիպասացների հայրենիքը

Էպոսի վիպասացների բուն հայրենիքը Վանա լճի ավազանն ու նրանից հարավ-արևմուտք և հյուսիս-արևելք ընկած գավառներն են՝ Սասուն, Մուշ, Բաղեշ, Մոկք, Շատախ, Վան, Հայոց ձոր, Խլաթ, Արճեշ, Մանազկերտ, Ալաշկերտ, Բայազետ: XIX-XX դդ. գավառներից պանդխտած և գաղթած վիպասացների ու նրանց սերունդների միջոցով «Սասնա ծռերն» անցել է Արևելյան Հայաստան, մասամբ պարսկահայերի մեջ և Թիֆլիս: Դրանց լեզուն հիմնականում արևմտահայ բարբառներն ու ենթաբարբառներն են, երբեմն նկատելի է նաև արևելահայ բարբառների ազդեցությունը: «Սասնա ծռերը» ավանդվել է բանավոր և նրա բնագրերը XIX-XX դդ. տարբեր վիպասաններից գրառված տարբերակներ են, որոնք կառուցվածքով, լեզվաբարբառային և վիպական ներքին հատկանիշներով բաժանվում են տիպաբանական-տեղագրական երեք մեծ խմբի՝ Սասնա, Մշո և Մոկաց: Սրանցից բացի, կան նաև խառը: Նախնական պարզ ու կուռ տիպը, հավանաբար, եղել է Սասունինը, որի տարածումից էլ ստեղծվել են մյուս տարբերակները:

## **Կառուցվածքն ու գլխավոր հերոսները**

Էպոսում գործում է վիպական հերոսների չորս հիմնական սերունդ. Սանասար և Բաղդասար, Մեծ կամ Ջոջ Մհեր (երբեմն՝ Առյուծաձև Մհեր), Դավիթ (Թլուլ, Թլոր, Թլվատ, Թառլան մականուններով) և Փոքր կամ Պստիկ Մհեր: Հերոսների այս չորս սերունդը միմյանց հետ կապված են ազգակցական կապերով: «Սասնա ծռերի» ամենաբնորոշ գիծը հերոսական անպարտելի ոգին է՝ պայմանավորված նրա նախահիմքում ընկած առասպելական դյուցազունների սխրանքներով և հայ ժողովրդի՝ իր ոսոխների, հատկապես արաբական

### **Կառուցվածքն ու գլխավոր հերոսները**

Էպոսում գործում է վիպական հերոսների չորս հիմնական սերունդ. Սանասար և Բաղդասար, Մեծ կամ Ջոջ Մհեր (երբեմն՝ Առյուծաձև Մհեր), Դավիթ (Թլուլ, Թլոր, Թլվատ, Թառլան մականուններով) և Փոքր կամ Պստիկ Մհեր: Հերոսների այս չորս սերունդը միմյանց հետ կապված են ազգակցական կապերով: «Սասնա ծռերի» ամենաբնորոշ գիծը հերոսական անպարտելի ոգին է՝ պայմանավորված նրա նախահիմքում ընկած առասպելական դյուցազունների սխրանքներով և հայ ժողովրդի՝ իր ոսոխների, հատկապես արաբական բռնակալության դեմ մղած դարավոր պայքարով:

## **Գրական մշակումներն ու թարգմանությունները**

«Սասնա ծռերի» գրական մշակումները սկսվել են դեռևս 1890-ական թվականներից, սակայն Դավթի ճյուղի լավագույն մշակումը համարվում է Հովհաննես Թումանյանինը («Սասունցի Դավիթ», 1903 թ.): Փոքր Միերի ճյուղը բանաստեղծական մշակման են ենթարկել ռուս բանաստեղծ Ա.Կուլեբյակինը («Միերի դուռ», Թիֆլիս, 1916 թ.) և Ավետիք Իսահակյանը («Սասան Միեր», 1922 թ.): Դավթի ճյուղը մշակել է նաև Եղիշե Չարենցը («Սասունցի Դավիթը», 1933 թ.) և ուրիշներ: Էպոսի ամբողջական, մշակված տարբերակը 1939 թվականին թարգմանվել է ռուսերեն: Համահավաք բնագիրը թարգմանվել է ֆրանսերեն, չինարեն, անգլերեն (թարգմանիչ՝ Լևոն Չավեն Սյուրմեյան), գերմաներեն, վրացերեն,

## **Գրական մշակումներն ու թարգմանությունները**

«Սասնա ծռերի» գրական մշակումները սկսվել են դեռևս 1890-ական թվականներից, սակայն Դավթի ճյուղի լավագույն մշակումը համարվում է Հովհաննես Թումանյանինը («Սասունցի Դավիթ», 1903 թ.): Փոքր Միերի ճյուղը բանաստեղծական մշակման են ենթարկել ռուս բանաստեղծ Ա.Կուլեբյակինը («Միերի դուռ», Թիֆլիս, 1916 թ.) և Ավետիք Իսահակյանը («Սասան Միեր», 1922 թ.): Դավթի ճյուղը մշակել է նաև Եղիշե Չարենցը («Սասունցի Դավիթը», 1933 թ.) և ուրիշներ: Էպոսի ամբողջական, մշակված տարբերակը 1939 թվականին թարգմանվել է ռուսերեն: Համահավաք բնագիրը թարգմանվել է ֆրանսերեն, չինարեն, անգլերեն (թարգմանիչ՝ Լևոն Չավեն Սյուրմեյան), գերմաներեն, վրացերեն, ադրբեջաներեն և այլ լեզուներով:

## **Եզրակացություն**

Դյուցազներգության սիրելի հերոսների՝ ազատատենչ, արդարամիտ, ազնիվ, հայրենիքի հանդեպ անսահման սիրով լցված կերպարների միջոցով հայրենասիրությամբ վարակել սովորողներին՝ հայ ժողովրդի բարոյական բարձր արժեքները և հոգևոր գեղեցկությունները ժառանգող նոր սերունդները:

## Գրականություն

- 1.Գարեգին Սրվանձտյան՝ Սասունցի Դավիթ, Կ.Պոլիս
- 2.Մ.Մ. Մկրյան, Երկեր, Երևան
- 3.Հակոբ Կոչոյան՝ Սասունցի Դավիթ